Տ. ԱՐՇԵՆ ԱԲԵՂԱ ՍԱՆՈՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(10 հունվարի 1999 թ.)

«Խորհուրդ մեծ և սքանչելի, որ յայսմ աւուր յայտնեցաւ. հովիւքն երգեն ընդ հրեշտակս տան աւետիս աշխարհի»:
(ՇԱՐԱԿՆ)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սիա այս գեղեցիկ ու հոգեպարար շարականով քերթողահայր Խորենացին փառաբանում և ցնծակցում է հրեշտակներին ու հովիվներին՝ բացելով Տիրոջ ծննդյան և աստվածահայտնության տոնը:

«Բանն մարմին եղեւ» (Հովհ. Ա 14), հիրավի մեծ և սքանչելի խորհուրդ, մարդկային պատմության մեջ աննախընթաց և մտքի համար անհասանելի ու անբացատրելի մի երևույթ, մի իրողություն: Մարդն Աստծուց իբրև պարգև ստացած միտքը փորձել է օգտագործել՝ խորամուխ լինելու համար աստվածային տեսչությունից ներս, ջարդելու փականները աստվածային նախախնամության, բացելու համար նրա վարագույրները: Սակայն ամեն անգամ, յուրաքանչյուր փորձի ընթացքում սթափվել է Տիրոջ այն խոսքի համեմատ, թե. *«Ո՞վ է մարդ, որ գիտէ զխորհուրդս Աստուծոյ»* (Առակ. Թ 13): Ով է մարդը, որ խորամուխ լինի Աստծո կամքի մեջ և իմանա Աստծո խորհուրդները: Իրապես խորհուրդը կդադարի այդպիսին լինելուց, եթե մարդկային տրամաբանության և դատողության օրենքներով կարողանանք բացատրել և հասկանալ այն: Սարդուն տրված է աստվածային մեկ այլ պարգև՝ հավատքը՝ որպես հիմք և ելակետ այդ խորհուրդը հասկանալու և բացատրելու: Հավատքն է, որ մեր հոգու աչքերի առջև կարող է բացել, զգալի ու տեսանելի դարձնել այն խորհուրդները, որոնք աստվածային են ու վեր մարդկային բանականությունից: Այո՛, հավատքով կարող ենք ըմբռնել միայն, թե Աստված, որ անսահման է իր բոլոր բնութագրումներով, պարփակվեց մարդկային սահմանափակ մարմնում, ապրեց մարդու պես:

Այսօր մեր եկեղեցին տոնում է Սուրբ Ծննդյան ու Աստվածահայտնության խորհուրդը: Սակայն ո՞րն է այդ խորհուրդը:

Առաջին՝ Փրկչի մարմնացումը եղավ աստվածային գերագույն հայտնությունը:

Աստված բազմիցս և զանազան եղանակներով Ինքն Իրեն հայտնել է մարդկությանը: Աստվածային ճշմարտությունները մարդկանց փոխանցվել են հրեշտակների միջոցով, առաքված մարգարեների, ամպի սյան և անկեզ մորենու տեսքով, բազմաթիվ ու բազմապիսի հրաշքների միջոցով: Սակայն մարդ մշտապես սայթաքել և ընկել է իր նախնական վիճակից, աստվածադիր օրենքներին անհարիր բարոյական չափանիշներ գտել՝ իր կյանքը վարելու համար, մարմինը վեր է դասել հոգու անաղարտությունից: Ուստի առավել զորեղ ու ազդեցիկ միջոց էր հարկավոր, որպեսզի մարդ կարողանար հենվել այդ իրողությանը՝ բարձրանալու համար իր անկյալ վիճակից: Այստեղ է, որ Աստվածորդին խոնարհվեց Իր երկնային բարձունքներից և երկիր իջավ,

հայտնվեց մարդուն իր իսկ տեսքով, հանձն առավ պատվել հասարակ խանձարուրով, կրել մարդկային չարչարանքները, վիշտն ու տառապանքը, սակայն և Իր խոսքի համեմատ՝ հաղթեց աշխարհին, ցույց տալով, որ մեր մարմինը լցնող աստվածադիր հոգին հրաշագործ է, քանզի կարող է հաղթահարել ամեն չարչարանք ու տառապանք, եթե միայն մաքուր և անաղարտ է, մարմնին ու նյութին իշխող ու մաքրակենցաղ կյանքի առաջնորդող է, եթե այն մաքուր ու սուրբ է:

Երկրորդ՝ Փրկչի ծնունդն ատվածային սիրո մարմնացումն է:

Աստված սեր է, և մարդու փրկագործության խորհուրդն այդ Սիրո արդյունք է: Սերը ենթադրում է կատարյալ նվիրում, լավագույնի ընծայաբերում, հնարավորությունների ամբողջական դրսևորում սիրեցյալի նկատմամբ: Աստված մարդացավ, քանզի սիրեց Իր արարածին՝ մարդուն, որն ստեղծագործության գագաթնակետն ու փառքն է: Չկա մեկը, որ չսիրի իր ձեռակերտը: Ուրեմն Աստված որքան պիտի սիրեր Իր արարչությունը, որը, իբրև Իր սիրո խտացում, խոնարհվեր, մարդանար՝ բարձրացնելու համար նրան: Ավետարանիչն ասում է. *«Աստված այնքան սիրեց մարդուն, որ անգամ Իր միածին Որդուն տվեց աշխարհին, որպեսզի նա, ով հավատա, կյանք ունենա»* (Հովհ. Գ 16): Այո՛, սա է Աստծո սերը մարդու նկատմամբ: Եվ այս սերն է տալիս մարդուն «Ի ՄԱՐԴԻԿ ՀԱՆՈՒԹԻՒՆ», «Ի մարդիկ սեր», և որպես արդյունք այդ սիրո՝ «ՅԵՐԿԻՐ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ»:

Եվ այս է այսօրվա խորհուրդը՝ Աստծո Հայտնությունը և այդ հայտնության միջից արտահայտված Սերը:

Այս օրերին տոնակատարում ենք Փրկչի հրաշալի Սուրբ Ծնունդը և լսում երկնային զորաց գովասանքները՝ *«Փառք ի բարձունս Աստուծոյ»*: Սակայն, ո՞րն է մեր պարտականությունն այսօր: Ճշմարտության նկատմամբ մեծագույն հարգանքն այն ամենուր հայտարարելն է:

2000 տարիներ առաջ հրեշտակները, հովիվները, Հիսուսի ծնողներն իրենց պարտքը կատարեցին Տիրոջ մսուրի առջև՝ փառաբանելով Աստծուն, երգելով *«Փառք ի բարձունս»*:

Եթե նույնիսկ այսօր մեծածայն փողերով տարածենք Տիրոջ Սուրբ Ծննդյան ավետիսը աշխարհով մեկ, ապա այդ բավական չպետք է լինի, այլ Հիսուս Քրիստոսի Ծննդյան ավետիսը պետք է կարողանանք ունենալ մեր կյանքերից ներս: Խորին խոնարհությամբ խոնարհվենք պարզ մսուրի առջև և հովիվների հետ աստվածպաշտությամբ երկրպագություն անենք: Մեր սրտերը դարձնենք մսուրներ, որպեսզի այնտեղ ծնվի Հիսուս, ծնկի գանք և հրեշտակների հետ մեկտեղ երգակցենք *«Փառք ի բարձունս»*, որպեսզի սերը մարդկանց մեջ և դրանից բխող խաղաղությունը տիրի երկրի վրա:

Սիրելի հավատացյալնե՛ր, ձեզ հետ տարեք ավետյաց պատգամը, թող սերը թագավորի ձեր օջախներում, ձեր ընտանիքներում:

«Շնորհք, սէր եւ աստուածային սրբարար զօրութիւն եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանդ. ամէն»: